ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 հոկտեմբերի 2024թ. թիվ 789-Ա

Ա.ԱՄԻՐԲԵԿՅԱՆԻՆ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՋՐԻ
Ս.ՍԵՅՐԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» թիվ 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 2-րդ ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2024 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 737-Ա որոշումը և հաշվի առնելով Ա.Ամիրբեկյանի դիմումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Աշոտ Միշայի Ամիրբեկյանին նշանակել «ՀՀ Լոռու մարզի Կաթնաջրի Ս.Սեյրանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչև օրենքով սահմանված կարգով մրցույթի արդյունքում նոր տնօրենի ընտրությունը և նրա հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:

2. Ա.Ամիրբեկյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հոկտեմբերի 8-ից:

Ստորագրող
ԱՐԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ
2003720081

2024-10-08 17:15:26 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱՋԱՐՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 8
ք.Վանաձոր